<<ՎԱՐԴԱՆԱՆՔ>> ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉԻՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բագրատունյաց Հայաստանի պետական կարգն ու տնտեսությունը

Առարկան՝ Հայոց Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Նաիրա Մարգարյան

Ղեկավար՝ Նունե Ասրյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի հ.2 ավագ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն.....3-6

Գլուխ 1. 7-11

Բագրատունիների թագավորության պետական կարգը

Գլուխ 2. 12-18

Բագրատունիների թագավորության տնտեսությունը

Դասի պլան-թեմայի ուսուցման կազմակերպման իմ փորձը19-23

Եզրակացություն.....24-25

Օգտագործված գրականության ցանկ.....26

Ներածություն

Խալիֆայությանը ենթակա երկրներում, այդ թվում և Հայաստանում, ավելի ու ավելի էր զորեղանում արաբական լուծը թոթափելու ձգտումը: Արտաքին քաղաքական իրադրությունը բարենպաստ էր դրա համար: Արաբական խալիֆայությունն անկում էր ապրում: Առանձին երկրների, հատկապես ծայրամասերի արաբ ամիրաներն ամրապնդել էին իրենց իշխանությունը և ձգտում էին անջատվել խալիֆայությունից: Կայուն չէր դրությունը նաև պետության կենտրոնում: Ժողովրդական ազատագրական ապստամբությունները և գահակալական կռիվները խարխլում էին տերության հիմքերը: Հայաստանի անկախության վերականգնման համար ստեղծվեցին նպաստավոր պայմաններ: Արաբական պետության թուլացման և տրոհման ժամանակաշրջանում երկրի տնտեսական կյանքում տեղի էին ունենում խոշոր փոփոխություններ: Ամրապնդվում էր հայ իշխանների տնտեսությունը, ընդարձակվում էին նրանց տիրույթները: Զարգանում էր երկրի տնտեսությունը, վերելք էին ապրում գյուղատնտեսությունը և արհեստագործությունը:

Տնտեսապես և ռազմականապես զորեղացող հայ նախարարներն անկախության էին ձգտում: Նրանք էլ գլխավորեցին հայկական պետականությունը վերականգնելու համաժողովրդական շարժումը: Հայ ժողովրդի բոլոր խավերը միասնական էին, և բոլորն էլ երազում էին անկախությունը վերականգնելու մասին: Խալիֆայության թուլացումից Հայաստանում ամենից հմտորեն օգտվում էին Բագրատունիները: Նրանք ձգտում էին իրենց իշխանությունն ու ազդեցությունը տարածել ոչ միայն ամբողջ Հայաստանում, այլ այսրկովկասյան երկրներում:

Բագրատունիների թագավորությունը գոյություն է ունեցել 885-1045 թվականներին: Հիմնադրել է հայոց իշխան Աշոտ Բագրատունին: Նա 885 թվականի օգոստոսի 26-ին Գևորգ Գառնեցու կողմից օծվում է հայոց թագավոր: Արքայական թագը պաշտոնապես ճանաչում է Բյուզանդական կայսրությունը և Արաբական խալիֆայությունը: Բագրատունիների հայկական թագավորության հիմնումը մեծ դեր է խաղացել Հայոց պատմության մեջ: Բագրատունյաց տոհմն, ինչպես նաև Մեծ Հայքի Հայկազյան նախարարական տոհմերից շատերը՝ շատ հին ծագում ունի: Նրա ծագումնաբանական արմատները Հայոց պատմության հազարամյակների խորքից են գալիս: Բագրատունիները կարողանում են ավելի քան 450 տարի առաջ վերացած հայկական պետությունը վերականգնել:

Դա պատմական կարևոր նշանակություն է ունենում Հայաստանի զարգացման գործում: Բագրատունիների թագավորությունը քրիստոնյա Արևելքի հզորագույն թագավորություններից էր:

ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ
IX դարի վերջին և X դարի սկզբին
Մասշտաբ 1: 6 500 000

Գլուխ 1.

Հայոց Բագրատունիների թագավորությունը կառավարման ձևով ավատատիրական էր: Ինչպես Հայկական նախորդ պետությունների կառավարման համակարգում, այնպես էլ Բագրատունիների ժամանակ պետության գլուխ կանգնած էր թագավորը: Հայոց թագավորը երկրի լիիշխան տիրակալն էր: Հայոց արքան օժտված էր քաղաքական, ռազմական, դատաիրավական ու հոգևոր-եկեղեցական լայն իրավալիազորությամբ: Հայոց արքան էր տնօրինում Հայոց Երկրի՝ Մեծ Հայքի ներքին և արտաքին քաղաքական գործընթացները: Թագավորի անձը համարվում էր սրբազան ու անձեռնմխելի: Բագրատունի արքան կրում էր նաև պարսկական ծագում ունեցող բարձրագույն տիտղոս՝ <<Շահնշահ Հայոց>>: Հայոց շահնշահի գերագահությունն ընդունում էին ոչ միայն հայ իշխաններն ու թագավորները, այլև Կուր գետից հարավ գտնվող վրացական ու աղվանական իշխանությունները: Թագավորը Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականու-թյուն վարելիս կարող էր խորհրդակցել սպարապետի, կաթողիկոսի, իշխանաց իշխանի հետ և բոլորը միասին կազմել են արքունիքը: Միջնադարյան Հայաստանի ավատատիրությունը, որը ձևավորվել էր դեռ Արշակունիների

թագավորության ժամանակ ,իշխանությունները ձեռք էին բերել մեծ իրավունքներ: Հայոց արքունիքը ուրույն կառույց էր, որը հատուկ էր միջնադարյան ավատատիրական պետություններին: Արքունիքում գործակալները հիմնականում նշանակվում էին արքայական տան անդամներից կամ թագավորի վստահելի ավատարարներից: Բագրատունի թագավորների գահը ժառանգում էր ավագ որդին, հաճախ եղբայր: Արքունիքում մեծ դերակատարում են ունեցել իշխանաց իշխանը և հայոց սպարապետը:

Իշխանաց իշխան-հաշվետու էր ենթակա իշխանների գործունեության համար: Նրան էին ենթարկվում արքայական կալվածքների տնօրինողները, պետական գանձարանը, հարկահանները: Այդ բարձր պաշտոնը սովորաբար տրվում էր արքայի եղբորը կամ գահաժառանգին:

Սպարապետ-Հայոց սպարապետը պետության զինված ուժերի՝ բանակի հրամանատարն էր: Պատերազմի ժամանակ ենթակա թագավորությունների զորքերի հրամանատարները ենթարկվում էին հայոց թագավորին:

9-11րդ դարերում սպարապետությունը վարել են Բագրատունիների և Պահլավունիների ներկայացուցիչները: Պատերազմի ժամանակ ենթակա թագավորությունների զորքերի հրամանատարները ենթարկվում էին Անիի

թագավորության սպարապետին:

Բանակ- Բագրատունի թագավորները հատուկ նշանակություն էին տալիս բանակին: Պատերազմի ժամանակ բանակը համալրվում էր, և զորքի թիվը մեծանում էր: Խաղաղ պայմաններում այն հասնում էր 80-100 հազարի: Բանակը կազմված էր արքունական և մարզպանական գնդերից: Արքունի գունդը անմիջականորեն ենթարկվում էր թագավորին, իսկ մարզպանական գունդը կազմվում էր իշխանական զորաջոկատներից: Բանակը կազված էր հեծելազորից, հետևակից և սակրավորական զորամասերից: Հայոց զորքի հիմքը այրուձին էր՝ հեծելազորը: Արքունական գունդը պահվել է մայրաքաղաքում և արքայական ամրոցներում:



Պետական կառավարման համակարգը Բագրատունիների օրոք

Գլխավոր դատավոր-այս պաշտոնը զբաղեցրել է հոգևոր առաջնորդը: Հելլենիստական Հայաստանում դատավորը եղել է քուրմը, իսկ քրիստոնեության ընդունումից հետո հայոց կաթողիկոսը: Դատավարությունը իրականացվել է եկեղեցական ժողովների մշակած կանոնների ու սովորույթային իրավունքի նորմերի համաձայն: Միջնադարի ամբողջ ընթացքում եկեղեցին մեծ մասնակցություն է ունեցել երկրի կառավարման մեջ: Բագրատունի թագավորների համար եկեղեցու դերն ավելի մեծացավ 10-րդ դարի երկրորդ կեսից, երբ թագավորների տիրապետությունը հեռավոր իշխանությունների վրա հաճախ ձևական բնույթ էր կրում և եկեղեցին էր ապահովում երկրի միասնականությունը: Հայոց կաթողիկոսի մնայուն տեղը դարձնում են Անիի մերձակայքում գտնվող Արգինան: Հայոց եկեղեցին դարձել էր խոշոր հողատեր: Վանքերը տիրում էին բազմաթիվ գյուղերի:

Գլուխ 2.

Երկրագործություն

Միջնադարյան Հայաստանում տնտեսության, ու բարեկեցության հիմնական աղբյուրը գյուղատնտեսությունն էր՝ իր երկու ճյուղերով՝ երկրագործությամբ ու անասնապահու-թյամբ: Մարդկության առաջացումից ի վեր զբաղվել են գյուղատնտեսությամբ, քանի որ երկրագործության ու անասնապահության համար երկիրը բարենպաստ պայմաններ ուներ: Լեռնաշխարհի խոշոր գետերի Եփրատի, Արաքսի, Կուրի, Տիգրիսի ու Ճորոխի հովիտները հացահատիկի մշակման, բանջարանոցային մշակաբույսերի ու այգեգործության զարգացման լավագույն շրջաններ էին: Հայտնի էին Այրարատյան, Շիրակի, Տարոնի, Բագրևանի, Բասենի և այլ դաշտեր: Հացաբույսերից լայն տարածում էր գտել ցորենի, գարու, հաճարի, բրնձի մշակումը:Արաբական տիրապետության տապալումից հետո երկրագործական արտադրանքը մնում էր Հայաստանում: Բերքատվության բարձրացման ու գյուղատնտեսական աշխատանքի կազմակերպման համար զարկ է տրվում երկրագործական տեխնիկայի զարգացմանը:

Լայնորեն տարածվեց հողի մշակման եռադաշտային համակարգը: Դրա տեխնիկան իրենից ներկայացնում էր հետևյալը. վարելահողը
բաժանվում էր երեք մասի, որի մի մասի հողը հերկվում էր և, առանց ցանքս կատարելու, թողնվում էր անմշակ վիճակում: Վարելահողի երկրորդ մասում աշնանացան էր կատարվում, իսկ երրորդ մասում՝ գարնանացան: Այդպիսով՝ եռադաշտային համակարգը հնարավորություն էր տալիս հողին հանգիստ տալ՝ բերքատվությունը բարձրացնելու նպատակով: Խոշոր տնտեսություններում՝ ագարակներում ու դաստակերտներում, հողը հերկում էին գութանով: Նոր մշակելի դարձած խոպան տարածքները հաճախ կոչվում էին *նորք*:
Երկրագործության զարգացմանը նպաստում էր պարարտավորումն ու հողի ոռոգումը: Բագրատունիների թագավորության շրջանում ընդարձակվում է ոռոգման ցանցը, որը ենթադրում էր հին ջրանցքների նորոգում և նորերի կառուցում: Հողամշակման և նրա տեխնիկայի բարելավմանը զուգընթաց առաջադիմում էր գյուղմթերքների մշակումը: Հայաստանում Լայն տարածում են ստանում
Գինու հնձանները, ջրաղացներն ու ձիթհանները : Դրանք կառուցվում էին բերդերի ու խոշոր վանական համալիրների մոտ: Գետահովիտներում ու հարթավայրերում աճեցվում էին պտղատու ծառեր, իսկ Այրարատյան դաշտում, Վանա
լճի ավազանում, Հայաստանի հարավային տաք կլիմա ունեցող վայրերում տարածված էր խաղողագործությունը: Նորություն էր

Նորություն էր բանջարանոցային որոշ մշակաբույսերի՝ լոբու, վարունգի, կաղամբի, գազարի, ձմերուկի մշակությունը:

.Անասնապահություն

Հայաստանի լեռնային հատվածները Արագածի լանջերը, Սյունիքը, Սևանի ավազանը, Տաշիր Ձորագետը, Վասպուրականը, Տարոնը, Սասունը և այլն, հնուց ի վեր ունեցել ընդարձակ արոտավայրեր, որոնք հարուստ են եղել ալպիական մարգագետիններով: Դրանք անասնապահության զարգացման համար բարենպաստ պայմաններ էին ստեղծում: Պահվում էին մեծ քանակությամբ խոշոր և մանր եղջերավոր անասուններ: Ժամանակի պատմիչը վկայում է, որ Աշոտ Ա-ն Հայոց կաթողիկոսին էր տալիս «ձիերի երամակներ, տավարի նախիրներ և ոչխարի հոտեր»: Մի արաբ հեղինակ վկայում է, որ «չի տեսել ավելի հարուստ և անասունների թվով ավելի նշանակալից մի երկիր, քան Արմինիան»: Տնտեսության մեջ զգալի կշիռ ունեին նաև որսորդությունը, մեղվաբուծությունը և ձկնորսությունը :Անասնապահությունը բավարարում էր ոչ միայն սննդի կարիքները, այլև սերտորեն կապված էր արհեստների ու առևտրի հետ: Կաշին կիրառվում էր զենքերի պատրաստման, կոշիկի ու հագուստների արտադրության մեջ: Բուրդն օգտագործվում էր գորգեր, հագուստ և այլ գործվածքներ պատրաստելու համար: Միջնադարում առևտուրը և քաղաքի ու գյուղի միջև կապն իրականցվում էր քարշող և բեռնակիր անասունների միջոցով:

Ձիերը, ավանակները և խոշոր եղջերավոր անասուններն օգտագործվում էին որպես հիմնական փոխադրամիջոց:

Արհեստներ

Երկրագործությունն ու անասնապահությունը, օգտակար հանածոներով հարուստ Հայկական լեռնաշխարհը նպաստում են արհեստների ու առևտրի զարգացմանը, նոր քաղաքների առաջացմանն ու զարգացմանը: Վաղ միջնադարի հետագա շրջանում՝ Արշակունիների թագավորության անկումից հետո, միայն Դվինն էր, որ շարունակում էր գոյատևել որպես մեծ քաղաք: Անկախության վերականգնման շնորհիվ 9-11-րդ դարերում հին քաղաքները մասամբ վերականգնվեցին, հանդես եկան շուրջ երեք տասնյակի հասնող նոր քաղաքներ: Դրանք առաջացան առևտրական ուղիների կարևոր խաչմերուկներում: Սկզբում բնակավայրը գոյանում էր պարսպապատ միջնաբերդի շուրջը: Այստեղ գտնվում էին արքային կամ իշխանին պատկանող դղյակներն իրենց օժանդակ կառույցներով: Բուն քաղաքում, որը կոչվում էր «շահաստան», կենտրոնացած էին արհեստանոցներն ու կրպակները, շուկաները, հյուրանոցները և այլ շինություններ: Պարսպապատ շահաստանից դուրս գտնվում էին քաղաքային արվարձանները: Խոշոր քաղաքներն ունեին ավագների խորհուրդ կամ երիցանի, որի գլուխ կանգնած էր

Մուհթասիբ կոչված պաշտոնյան հսկում էր հարկահավաքությունը, շուկաները, առևտրական կրպակները և արհեստագործական գործատները:

Զարգացած միջնադարի հայոց ամենանշանավոր քաղաքը պետության մայրաքաղաք Անին էր: Այն աչքի էր ընկնում ոչ միայն աշխարհիկ շքեղ շինություններով, այլև բազմաթիվ եկեղեցիներով ու վանքերով: Քաղաքը քարաշեն էր և ուներ սալահատակված փողոցներ: Բյուզանդական պատմիչներից մեկի խոսքերով «Անին մեծ և բարեկարգ քաղաք է»: Շահաստանում էին գտնվում արհեստավորների գործատները, առևտրականների կրպակները, շուկան և հյուրանոցները: Առևտուրը կատարվում էր հատուկ հրապարակում, ուր միշտ կարելի էր հանդիպել օտարերկրյա վաճառականների: Քաղաքի բնակչությունն ապահովված էր խմելու ջրով, որը բերվում էր 12 կմ հեռավորությունից՝ կավե խողովակներով: 9-11-րդ դարերում՝ արհեստների ու առևտրի բարձր զարգացման շնորհիվ, բարգավաճեց Դվին քաղաքը: Այն ուներ ընդարձակ շուկա, արհեստավորների մեծ թվով գործատներ և առևտրականների կրպակներ ու խանութներ: 10-րդ դարում մեծ զարգացում ապրեցին Վանանդի թագավորության կենտրոն դարձած Կարսը, Վասպուրականի թագավորության կենտրոն հինավուրց Վան քաղաքը, և այլն: Հայաստանի կարևոր քաղաքներից էին նաև Խլաթը, Նախճավանը, Կապանը, Բաղեշը և այլն:

Քաղաքներում առաջին հերթին զբաղվում էին առևտրով, որը իրականացվում էր արհեստագործական արտադրանքի ու գյուղատնտեսական մթերքների ու հումքի
փոխանակմամբ: Ոչխարի բրդի, բամբակի, վուշի, մետաքսաթելի, մորթու արտադրությունը մեծապես զարկ
տվեց մանածագործական ու կաշեգործական արհեստների զարգացմանը: Մեծ տարածում ստացան կոշկակարությունը, գնդակագործությունը և մագաղաթի մշակումը: Երկրի աճող պահանջմունքները բավարարելու համար ծաղկում
ապրեց մետաղագործությունը :
Զարգացան պղնձագործությունը ,ոսկերչությունը
զինագործությունը :
  Մետաղագործ վարպետները պատրաստում էին
գյուղատնտեսական գործիքներ, պղնձե ամանեղեն,
եկեղեցական սպասք, պերճանքի առարկաներ,
զարդեր և սառը զենքեր: Գյուղատնտեսության բուռն վերելքը՝ կապված բնակչության արագ աճի հետ, մեծապես խթանեց գյուղատնտեսական գործիքների արտադրությունը: Պատրաստում էին գյուղատնտեսական գործիքներ, կենցաղային իրեր, շենքերի փայտյա մասեր և այլն: Հայ ճարտարապետների, քարտաշների և որմնադիրների շնորհիվ կառուցապատվում էին նոր քաղաքներ ու բերդեր, քարավանատներ ու կամուրջներ, աշխարհիկ ու եկեղեցական շենքեր:

Առևտուր

Արհեստագործության ու գյուղատնտեսության զարգացումը խթանում է ներքին և արտաքին առևտրի կտրուկ աճը: Մի կողմից քաղաքային բնակչությունը ուներ գյուղատնտեսական մթերքների կարիք, իսկ արհեստավորները՝ գյուղատնտեսական հումքի մեծ պահանջ, մյուս կողմից՝ գյուղում անհրաժեշտ էին արհեստավորների պատրաստած գործիքներ, հագուստ ու կոշկեղեն: Քաղաքներում վաճառքի կետեր ունեին նաև վանքերն ու արհեստավորները: Մեծ քաղաքներում և ճանապարհների խաչմերուկներին սկսեցին կազմակերպվել կիրակնօրյա շուկաներ, ինչպես նաև՝ ամենամյա տոնավաճառներ:

Իրար հետ պատերազմող Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի միջև գտնվող Հայաստանը դառնում է տարանցիկ առևտրի կարևոր կենտրոն՝ գտնվելով Մետաքսի մեծ ճանապարհի կենտրոնում: Արտաքին շուկա էին հանում հացահատիկ, ձիեր, ջորիներ, երկաթ և գունավոր մետաղներ, գյուղատնտեսական մթերքներ, աղ, ներկեր, մետաղե գործիքներ, ոսկյա և արծաթյա իրեր, բրդե, բամբակե ու մետաքսե գործվածքներ, պղնձե ամանեղեն և այլն: Ներմուծվող ապրանքների մեջ առանձնանում էին հնդկական համեմունքները և թանկարժեք քարերը, չինական մետաքսե գործվածքները և ճենապակին, ռուսական մորթիներ և այլն: Առևտուրը կատարվում էր արաբական և բյուզանդական դրամներով, քանի որ Բագրատունի գահակալները սեփական դրամ չէին հատում:

Դասի պլան

ԹԵՄԱ-Բագրատունյաց Հայաստանի պետական կարգն ու տնտեսությունը

1. **Նպատակ**

- **Սովորողներին տեղեկացնել, ծանոթացնել**

Բագրատունիների թագավորության կառավարման համակարգի մասին:

- **Ծանոթացնել տնտեսության**

զարգացման առանձնահատկություններին:

- **Սովորողները պատկերացում կազմեն Բագրատունյաց թագավորության**

ժամանակաշրջանի մասին:

2. Վերջնարդյունք

Կարողանան

- **Վեր հանել կարևոր փաստերը և իրադարձությունները:**
- **Բացահայտել փոխհարաբերությունները հարևան**

երկրների հետ:

- **Պատկերացում կազմել կառավարման**

համակարգի մասին:

- **Ցույց տալ տնտեսության զարգացման**

ճյուղերը, միտումները:

- **Ծանոթանալ քաղաքաշինության**

առանձնահատկություններին:

. Ծանոթանալ միջնադարյան

շրջանի արհեստի ճյուղերին:

3. Առաջարկվող գործիքներ, մեթոդներ

.Կիրառել Վեննի դիագրամ, քարտեզագրում,T-աձև ,M –աձև աղյուսակներով զուգահեռներ տանել Արշակունիների և Բագրատունիներիթագավորների միջև: Համադրել, հակադրել, տանել նմանություններ, մտագրոհ, հարց ու պատասխան, քայլ առ քայլ, ՏՀՏ գործիք՝սահիկաշար,ամբողջ դասընթացը իրականացնել ԳՈՒՍ մեթոդով, կիրառել քառաբաժան:

4. Խաչվող հասկացություններ

. Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանի ներկայացում, անդրադարձ աշխարհագրական դիրքին, սահմաններին:

Պատճառ և հետևանք

. Վերլուծել թագավորների վարած քաղաքականության պատճառահետևանքային կապերը:

Կառուցվածք և բովանդակություն

Ներկայացնել պետության կառուցվածքը և կառավարման համակարգը:

Անհատ և հարաբերություններ

.Թագավորների միջանձնային կապերը սպարապետների, իշխանների և հոգևոր առաջնորդի հետ:

Անհատական և մշակույթային արժեհամակարգ

.Վեր հանել անկախ պետականության գաղափարը, բանակի կառուցվածքային առանձնահատկությունները, հոգևոր և մշակույթային արժեքները:

Օրինաչափություն

. Բագրատունիների թագավորների ժառանգական իրավունքները: Քաղաքների հիմնումը և անվանակոչումը:

5. Միջառարկայական կապ

. Համաշխարհային պատմություն, աշխարհագրություն, հայոց լեզու, գրականություն, հասարակագիտություն, արվեստ:

Խթանում-ԳՈՒՍ մեթոդով վեր հանել նախնական գիտելիքները և սովորողներին կենտրոնացնել թեմայի շուրջ: Վեր

հանել առաջնային իրադարձությունները, թվարկել

թագավորների գահակալման ժամանակաշրջանը:-

մտագրոհ,հարց ու պատասխան

Իմաստի ընկալում-Դասախոսություն, <<հեղինակի

աթոռի>> միջոցով ներկայացնել թագավորի իրավունքն ու

լիազորությունները:

.Ինքնուրույն աշխատանք-Կազմել հարցաշարեր, թեմային առնչվող հարցերի ձևակերպումներ, աշխատանք ժամանակագրության հետ:

.Գործնական աշխատանք-Կազմել Բագրատունյաց թագավորության պետական կարգի գծապատկեր,աղյուսակներ:

.Կշռադատում-ամփոփել նոր նյութի յուրացումը,

.Արժևորել հայոց պատմությունը

.պետական համակարգի և ինքնիշխանության նկատմամբ

ունենալ ճիշտ դիրքորոշում

.արժևորել անցյալը, հայ ժողովրդի պայքարի և

հաղթանակի դրվագները

22

.արժևորել հոգևոր և մշակույթային կյանքը

Գնահատում

.սովորողների գիտելիքների գնահատում,

ինքնագնահատում, ,փոխադարձ

գնահատում, խրախուսական, ձևավորող գնահատում

Անդրադարձ-անավարտ նախադասություններով

արժևորված պատասխանների միջոցով

Դասը արդիականացնել(քննարկել միապետության և

ժողովրդավարության հիմունքները), կարևորել

պատմական իրադարձություններից ճիշտ դասեր քաղելը:

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքի շնորհիվ սովորողները պետք

է ոչ միայն իմանան Բագրատունյաց թագավորության

ժամանակաշրջանի իրադարձությունները, այլև կարողանան

գնահատել, արժևորել

- Բագրատունյաց թագավորների ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում ձեռքբերումները,
- վեր հանել պետական համակարգի և բանակի

կառուցվածքային առանձնահատկությունները:

- Զուգահեռներ տանել Արշակունյաց շրջանի պետական կարգի և արդի ժամանակաշրջանի միջև:

Թեմայի շնորհիվ պետք է սովորողների մոտ ձևավորել ճանաչողական հմտություններ, որը կնպաստի

նրանց կողմից անկախ , ինքնիշխան պետության պահպանմանն

ուղղված գաղափարի ամրապնդում և արժևորում: ԵՎ

ընդհանրապես հայոց պատմության իմացությունը պարտադիր

է յուրաքանչյուր հայի համար՝ արժևորելու անցյալը,

գնահատելու ներկան և ձևավորել ապագայի տեսլական:

Թեմայի շնորհիվ նաև ուզում եմ

- վեր հանել միջնադարյան շրջանի հերոսական պայքարի և հաղթանակների դրվագները, որոնցում արտացոլվում է հայ ժողովրդի ազատ, խաղաղ, պայքարող, բնածին ձգտումները:

- Նպաստել հայ քաղաքացու ձևավորմանը, ով կլինի ազգային ու հոգևոր արժեքների կրողը, պահպանողը և հաջորդ սերունդներին փոխանցողը:
  Այս դասի դասավանդման միջոցով նպաստել սովորողների վերլուծական, ստեղծագործական մտածողության, ճանաչողական հմտությունների և կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Գրականության ցանկ

1. Հայ ժողովրդի պատմութիւն, Հ.Գ. Ժամկոչեան, Ա,Գ. Աբրահամեան, Ս.Տ. Մելիք-Բախշեան, Ս.Պ. Պողոսեան, սկզբից մինչև 18-րդ դարի վերջը, Երևան, 1975թ., էջ 427-428:
2. Հմմտ. Հայոց Պատմություն, հատոր Բ, Գիրք երկրորդ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Երևան, 2014, էջ 18:
3. Տեր-Ղևոնդյան Ա.Ն., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Ե., 1965: